կարելի երևակայել որ նուազ իմաստութեամբ դաշնակցեր է, դաշինքին բոլոր ծանրութիւնն իւր վրայ բառնալով, որով զինքն ի վտանգի դրած ըլլայ յամենայն դէպս միշտ հաւատարուժ հռչակուելու Հռոմայեցիներէ։ Ուստի կրնանք հաւատի կերպով վստահիլ, որ Հայոց թագաւորի և և Հռոմի ժողովրդեան միջև՝ Մակաբայեցոց դաշինքին յար և նմանը դաշնադրուած ըլլայ. դա այնքան տրամաբանական մի գործ է, որ ի սկզբանէ մինչև ի դարն Նոյն օրինօք դրուած են դաշինքներն բարեկամ ազգերու մէջ։ Այս այսպէս լինելով, արդ տեսնանք թէ Արտաւազդ պարտք ունէ՞ր օգնել Հռոմայեցւոց և կռուիլ Անտոնիոսի հրամանի տակ թէ ոչ։ Ըստ դաշնադրութեան օրինաց ոչ. վասն զի յարձակողական կողմն Հռոմայեցւոց էր։ Պարթևներն վինդեռիոսէ երեք անգամ պարտութիւն կրելով, Աւորիք և Միջագեռք թողին Հռոմայեցւոց և քաշուեցան իրենց հին սահմաններու մէջ։ Կրասոսի վրէժն առեր էին Բակուր արքայորդւոյ մահուամբ, և երկու ազգերը խաղաղութեան մէջ էին։

Արտաւազդ չէր կրնար միանալ Անտոնիոսի յարձակողական պատերազմին, առանց հաւատարուժ լինելու առ Պարթևս, որոց հետ Կրասոսի ժամանակէն հաշտութիւն կռեր և բարեկամութեամբ կապուեր էին երկու արքունիքն։ Անտոնիոս պէտք էր գիտենալ զայս, ուստի և ոչ պիտի սիրտ ընէր հրաւիրելու զնա ի նիզակակցութիւն ընդդէմ Պարթևաց։

Եւ արդարև եթէ մանր միտ դրուի Պլուտարքոսի պատմածին, յայտնի կը տեսնուի որ Արտաւազդ մասնակից չէ եղած Անտոնիոսի արշաւանքին. ուստի ինչ որ ի վնաս Հայոց թագաւորին գրուած է, եկամուտ են Պլուտարքոսի մէջ Անտոնիոսի շնթող վիպասաններէն քաղելով։ Քիչ յետոյ պիտի տեսնենք թէ ե՞րբ, ուր և ո՞ւմ թելադրութեամբ կազմուեր է այդ առասպելը, արդարացնելու համար իրենց հաւատարժութեամբ զքաջասիրտ թագաւորը կալանաւորելու վատազգի քաղաքականութիւնը։

Մնղոյ Շիրակաց

ԲԱԿԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ՆԱՊԱՍՏԱԿԻ ԵՒ ՃԱԳԱՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՃԱԳԱՐՆԵՐԸ փոքր, ստնաւոր կենդանեաց դասին կը պատկանին, կրծողներու կարգին և նապաստակներու տեսակին։

Կրծողները կը բաղկանան փոքրահասակ կենդանիներէ, որոնք՝ հետևեալ հասարակաց նկարագիրը ունին։ Ակռաներու կազմը այնպէս է՝ որով կրնան թէ կրծել և թէ կտրել. շնատամունք չունին, բայց ունին երկու զոյգ հերցատամներ որոնցմէ երկուքը վերը և երկուքը վարի կողմը կը գտնուին, որոնք՝ առջևը կորնթարդ ձև մը կուտան, և կիտուածային են. ակռաներուն ներքին երեսը կիտուածային չէ, անոր համար շատ և շուտ կը մաշին, բայց անոնց ետևումն ալ շատ և շուտ է։ Աղօրի ակռաները առիշեղ կիտուածային ծալքեր ունին, որոնց թիւը իրաքանչիւրի վրան վեց հատ է. իսկ ամբողջ ակռաներուն թիւը 16 հատ բացի կաթի ակռաներէն։ Կզակի դնդերները շատ բացուած են, բերանին փոքր է, ծնոտի կապը շատ նեղ և անոր համար ծամելու ժամանակ կողմնակի շարժում կու տան անոնց, ետևէն դեպ յառաջ։ Նրբանազնաց են, մատները ազատ, շարժուն, որ կամ եղունգով և կամ փոքր կոճերով կը վերջանան։

Այս համառօտ նկարագիրը թէ նապաստակին և թէ ճագարին յատուկ է, որով՝ շատ դիւրաւ կարելի է իրարու հետ շփոթել. բայց՝ ուրիշ շատ մը անդամազնական և բնախօսական յատկութիւններ ալ ունին, որոնք՝ որոշակի իրարմէ կը զանազանեն և երկուքն ալ տարբեր տեսակներու կը վերածեն։ Այս տարբերութիւնները շատերուն ծանօթ չէ, անոր համար կ'ուզեմ մի քանի տողերով երևան հանել զանոնք, մասնաւորապէս այն բանին համար որ, շատեր զճագարը նապաստակի ընտանիքէն կը համարին, և երբեմն գոյներու նմա-

© National Library of Armenia

նութիւն տեսնելով կը կարծեն թէ՝ երկու տեսակներու միացումովը կարելի պիտի ըլլայ շատ աւելի մեծդի երրորդ տեսակ մը ունենալ, ինչ որ բոլորովին անհնար է։

Ճագարի ջերմութեան աստիճանը նապաստակինէն բարձր է, ինչպէս որ բարձր է բեղմնաւորութիւնը. նապաստակի ձագերը տարբեր վիճակի մէջ կը ծնանին քան թէ ճագարինները, որովհետև՝ առաջինները ծնած ատենին աչքերնին բաց կ'ըլլայ և մարմիններն ալ մազով ծածկուած, նմանապէս ուժով կ'ըլլան և կրնան տեղերնին փոխել, իսկ անմիջապէս երկրորդ օրը կրնան փախչիլ. մայրերնին հազիւ 5 – 6 օր քովերնին կը մնայ, վերջը կիրնք կը թողու, միայն երբեմն կը հանդիպի անոնց կաթ տալու համար, մինչև որ 20 օրուան ըլլան. վերջը՝ բոլորովին կը հեռանայ։ Մինչդեռ ճագարի փոքրիկները գոց աչքով կը ծնանին, մերկ և կարմրորակ մորթով, և հազիւ 10 օր վերջը կը բացուին անոնք. տասն և հինգերրորդ օրն ալ բոյնէն կ'ելնեն միմիայն մի քանի վարկեանի համար։

Ճագարը շատ կ'ուտէ, բայց շատ քիչը կը մարսէ, որովհետև՝ մարսողութեան շատ քիչ կարողութիւն ունի, և ասոր համար է որ շատ ուտելու պէտքը կը զգայ։ Դիտուած է որ՝ երբ ճագարը հանգստեան մէջ է և ուտելու բան մը չունի, իւր յետոյքէն կ'առնու իւր աղբը և կ'ուտէ, երկրորդ անգամ մարսելու զայն, և եթէ արգիլեն զայն՝ կը մեռնի։

Նապաստակը ընդհակառակն քիչ կ'ուտէ և անկէ աւելին կ'օգտագործէ։

Նապաստակը շատ աւելի ցուրտին կը դիմանայ և անոր համար շատ աւելի ուժով է։

Ճագարը նապաստակէն աւելի կը դիմանայ ջուրի պակասութեան և իւր ձագերը պատսպարելու համար որջ կը շինէ. Ճագարը երբ ուզէ տեղափոխուիլ, կամ վախէ, և կամ դժգոհ և անհամբեր ըլլայ, առջևի ոտքերուն վրան կը յենու և ետևի ոտքերը վեր բարձրացնելով կնդակնեբրովը ուժով հարուած կու տայ գետնին և կը տրոփէ. մինչդեռ նապաստակը՝ ոչ որջ կը շինէ և ոչ ալ ոտքի տրոփումն ունի։

Հասարակ նապաստակը շէկ մոխրագոյն է, կարմրորակ, վարի մասերը սպիտակ են, պոչը ամենակարճ, որուն վրան սև է, իսկ տակը սպիտակ. ականջը սև է, ծայրը գլխէն աւելի երկայն. մազերը երեք երանգ ունին, որ է՝ խարիսխը սպիտակ, մէջտեղը մոխրագոյն, ծայրը շիկակարմիր։

Հասարակ ճագարի գոյնը շատ կը նմանի նապաստակի գոյնին, միայն թէ մոխրագոյն կարմրորակը քիչ մութ է. գլխոյն վրայի մասը, թիկունքը, կռնակը, շէկի՝ կարմրորակի՝ և սև մոխրագոյնի խառնուրդ մ'են. ծոծրակը վարդագոյն է, ականջները շէկ են, վերջաւորութիւնը առանց սեի. վիզը, փորը, ճերմակ են. պոչի վերին մասը՝ թուխ է, ներքևը՝ սպիտակ. կռնակի երկայն մազերու խարիսխը՝ մոխրագոյն է, մէջտեղը սև, իսկ ծայրը շէկ. ոտքերը ծածկող մազերը կարմիր կամ թեթեւակի շէկ են։

Այս ամէն բաներէն կրնանք դիւրաւ եզրակացնել, թէ այս երկու կենդանիներն ալ թէև արտաքուստ և ընդհանուր կերպով շատ բաներու մէջ իրարու նման են, բայց եթէ մասնակի կերպով մարմնոյն առանձին մասերը քննենք և բնախօսական մանրամասնութիւնները ի նկատի առնենք, պիտի նշմարենք անթիւ տարբերութիւններ և զանազանութիւններ։

Ճագարին ծագումը եւ պատմութիւնը

Հնէաբանական քննութիւնները այնպէս եզրակացուցել կու տան թէ կրծողները միջատակերներեն առաջ եկած ըլլան։

Հիներուն ծանօթ կենդանի մ'էր նապաստակը, բայց ճագարը ոչ. առաջին անգամ կը հանդիպինք Պոլիպոսին մէջ (200ին. ն. ք. գիրքիստոս) որ կը խօսի ճագարին վրան, և ուրկէ կը հասկցուի թէ շատ ծանօթ կենդանի մը չէ. կը գրէ՝ «Մարդը կարծէ թէ նապաստակ մը տեսած է, բայց բռնելով կը տեսնէ որ խաբուած է, այլ ուրիշ տեսակ մ'է»։ Իսկ Ստրաբոն

© National Library of Armenia

աւելի մանրամասն և բնորոշող կերպով կը գրէ. «Այս ՁԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՆ, ճա-«գարը, իւր ՁԱՍԱՆԵՐԸ Սպանիէն մինչև «Մարսիլիա կը տարածէ»։ Պլինիոս ալ կ'ըսէ «Ճագարները, Պալեարի կղզիները «փճացուցին, այն աստիճան որ ժողովուրդը «սովէն նեղուած, ստիպուեցան զինուորա-«կան օգնութիւն խնդրել երկնային կայ-«սերմէ»։ Վարոն աւելի բացայայտ կեր-պով կ'ըսէ թէ «Ճագարը Իտալիոյ յատուկ «կենդանի մը չէ և թէ զայն ունենալու «համար պէտք է Սպանիայէն բերել տալ»։

Ճագարի ընտանեցումը կամաց կամաց տարածուեցաւ մինչև ԺԶ դարը և նոր ցեղեր կազմուեցան, սակայն ցեղերու մեծագոյն մասը անցեալ դարուն մէջ ձևացած են. որովհետև, ըստ Ռոցիէր քահանային, 1809ի ժամանակները միմիայն չորս ցեղ ծանօթ էր։

Հին հռոմայեցի պատմիչներու վկայութեան համեմատ, ճագարի առաջին հայրենիքը եղած է միջերկրական ծովու արևմտեան կղզիները և Սպանիա, բայց վերջը կամաց կամաց տարածուած է կեդրոնական և հարաւային Եւրոպոյ մէջ. կրնանք հաւանական համարիլ նաև թէ իւր նախկին և բնիկ հայրենիքը եղած ըլլայ Աֆրիկէ և անկէ անցած ըլլայ Սպանիա, ուր՝ դեռ վայրի վիճակի մէջ գտնուող ճագարներ կան, ինչպէս կան նաև Գորսիգայի, Սարտենիայի և Սիկիլիոյ մէջ։ Հիւսիսային Եւրոպայ չի գտնուիր, որովհետև, չէ կրցած անոր կլիմային վարժուիլ. հիւսիսային լայնութեան 56°էն անդին չէ անցած։

Աւաղրալիա փոխադրուած ճագարները այնչափ և այնպիսի բեղմնաւորութեամբ աճած են, որ ամենէն աւելի ՁԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԵԱՑ կարգէն համարուած են, արգելք հանդիսանալով միուս տեսակ կենդանեաց, մասնաւորապէս արջառներու, բազմացման։

Այս փոքրիկ ստնաւորները, իրենց բեղմնաւորութեամբը այնչափ շատցած և աճած էին որ կատարեալ սարսափ մը և աղէտ մը դարձած էին Աւստրալիոյ մի քանի գաւառներու մէջ։ Այս պատիժէն ազատելու համար, մարգագետինները արմատէն խլուած էին, այգիները իրենց յատակէն կտրուած և բանջարանոցները բոլորովին վերջացուցած. առանձնականներ ալ շատ մը միջոց գործադրիցին որպէս զի փճացընեն ճագարները. շատ անգամ՝ մրցանակներ խոստացուեցան որսորդներուն, զինուորական արշաւախումբեր կազմուեցան՝ միմիայն ճագարները սպաննելու համար, մեծ տուգանքներ չսպաննողներուն վրայ դրուեցան, երկաթէ ցանցերով ուզեցին զանոնք այլ և այլ տեղերու մէջ կղզիացընել, ճագարին թշնամի եղող յուզակ և կուզ, փոքր արիւնարբու կենդանիներով պատերազմեցան, բայց յաջողութիւն մը ձեռք չի կարենալ բերելով 1887ին, տերութիւնը գիտնականներուն դիմեց և 625,000 ֆրանքի պարգև մը խոստացաւ անոր՝ որ կարող ըլլայ ճագարները փճացնելու և ըրած ՁԱՍԱՆԻՆ մեղմելու գիւտ մը ընէ։

Նոյն տարւոյն 27 Նոյեմբերին Փասթէօր խորհուրդ տուաւ որ ճագարներու կերակուրին վրան ցանուի հեղուկ մը որ հաւերու գոլերայի միքրոպով վարակուած ըլլայ, և կ'ուզէր այս կերպով վարակել տալ բոլոր ճագարները և քիչ ատենուան մէջ զանոնք բնաջինջ ընել. ուրիշ գիտնականներ ալ այս սկզբունքին վրայ յենած ուրիշ առաջարկութիւններ և փորձեր ըրին, բայց Աւստրալիական տերութիւնը բնաւ գոհ չի մնաց։

Հ. ԹԷՈԴՈՐ ՍԻՐՈՒՆԵԱՆ

(Շարունակութիւն)

© National Library of Armenia